

2460

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՏԵՎ

# ՄՈՍԿՎԱՅԻ ՀՐԿԻԶՈՒՄԸ

1748 ԹՎԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀՐԴԵՋՆԵՐԸ

(Ոժտանդակ նյութեր հեռակայողներին)

—

9(47)

Զ - 88

ՌԻՍՏԻՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

2011-071

Հ. Խ. Ս. Հ.

ԼՈՒՍԺՈՂԿՈՍԱՏ

№ 12 ՌԻՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎՈՐԱԿՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ № 12

24 JAN 2008

Հրմ.  
3-1633a

9(47)

2-88 ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՅԵՎ

# ՄՈՍԿՎԱՅԻ ՀՐԿԻԶՈՒՄԸ

1748 ԹՎԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀՐԴԵՅՆԵՐԸ



Инв. № 6132

2460

Թարգմ. Մ. ԶՆԻՐՅԱՆ  
Խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ  
Սրբագրել է ԳՍՐ. ՀԱԿՈՐՅԱՆ



4859-87

Գրավիճակ 2237 հրատ. 12 պատվ. 2 տիրո՞ւմ 1000

Հանձնված է արտագրության 22 դեկտեմ. 1936 թ.  
Ստորագրված է տպելու 2 հունվարի 1937 թ.

Ուսուցիչները վերականգնում են լրատվությունը տպագրան,  
Յերեան, Մարքսի փողոց 17

### Մ Ո Ս Կ Վ Ա Յ Ի Շ Ր Կ Ի Զ Ո Ւ Մ Ը \*

1748 թվի ՄԱՅԻՍՅԱՆ ՇՐԴԵՆԵՐԸ

1748 թվին Յեկիզավետա կայսրուհին Պետերբուրգից մեկնեց Մոսկվա մի ամբողջ տարով: Դրանից քիչ առաջ, Յեկիզավետայի դահ բարձրանալու յոթերորդ տարեգարձի առթիվ հռչակավոր Մ. Վ. Լամոնոսովը նրան նվիրեց մի շողոքորթող ներբող, վորով շոշափում էր նրա առաջիկա այցելութունը Մոսկվա: Հաճոյակատար գիտնականի խոսքերով՝ հնադարյան մայրաքաղաքը հիացմունքով և համակվում «պաշտելի» կայսրուհու զալստյանն սպասելով: Ներբողում, ի միջի այլոց, կարգում ենք հետևյալ սողերը:

«Ամբողջ Մոսկվան ծունկի իջած  
Յեկ քս առջևը կանգնած,  
Մպխտակ մաղերը փռում է,  
Քեզ, զիցունի, սպասում է,  
Միայն քեզ ազադակելով,  
Տես պաճարներս հրկիզված,  
Տես պարխապներս խորտակված»

\*) Հոդվածը գրված է արխիվային այն ավանդների հիման վրա, վորոնք պահվում են Մոսկվայի Ֆեոդալ-ճորտատիրական զարաշրջանի պետական արխիվում (ԳԱՖԿՆ) (հետախուզական զիվանատան և Մոսկվայի բարեկարգման վարչության գործերը):

Մայսուձ եմ պուտա ձեռքիդ  
Տես, արշարույս ամենագեղ,  
Տես և դեմքովդ շողշողուն  
Յե՛վ ծիրանիիդ փայլով պայծառ  
Սմոքիր սրտերը տխուր—  
Յե՛վ դնրձ ժամանակը վոսկյա»:

Այս սողերն արձագանդ ելին հանդիսանում այն թշվառութեան, վոր մոսկվացիներին պատճառեց 1748 թվի մայիսի հըրդեհը: Դարերի ընթացքում Մոսկվան վարժվել էր հաճախակի հրդեհների, սակայն այս տարվա ամառացումն ասանձնապես խիստ տարվորութուն դորձեց:

Մի տասնհինգ օրվա ընթացքում քաղաքի դանազան մասերում տեղի ունեցան բազմաթիվ հրդեհներ: Նրանցից առաջինը՝ մայիսի 10-ինը՝ առանձնապես կործանիչ էր. այդ օրն այրվեց 1202 տուն, 25 յեկեղեցի և հրի մեջ մահացավ 96 մարդ:

Հրդեհներն առանձնապես հաճախ ելին կրկնվում ամսի վերջին. մայիսի վերջին 9 օրում հայտնի յե 25 դեղք, իսկ մի օր (մայիսի 25-ին) Մոսկվայում հրդեհ ծագել է 8 տեղ: Միայն 5 մեծ հրդեհի ժամանակ (մայիսի 10, 15, 23, 24 և 25) այրվել է 1883 ծուխ: Իսկ ընդամենը փրակվել են յերկու հազար ծուխ:

Այս բոլոր պատահարները ծավալվեցին շատ կարճ ժամանակամիջոցում և խիստ վրդովմունք առաջացրին բնակչութեան բոլոր խավերի մեջ: Ասես թե ամենուրեք խարույկներ ելին բոցավառվում: Ա. ևն մի բնակչի գլխին դամոկլյան սրի պես կախված էր քայքայվելու և անոթեան մնալու վտանգը: Անտոք տարերքի հանդեպ Մոսկվան իրեն անողնական էր զգում:

Մոսկվայի իրավազուրկ ու անարեկված բնակչութունը չէր կարող ունենալ հասարակական ինքնագործունեություն վորեւ ընտելութուն: Նա անընդունակ էր ինքը պայքարելու կրակի դեմ և, առավել ևս, կանխելու այն: Այս արհավիրքը ծնում էր եզոխզմի ծայրահեղ արտահայտություն, փոխադարձ կասկածանք և ընդհանուր շփոթվածություն: Մութ լուրեր դուրս սողացին և լայն տարածում ստացան, թե զրանք զխաղվորյալ հրկիզումներ են: Ազնվականական կառավարութունը, վոր պակաս չէր շփոթված քան բնակչութունը, արագորեն ընդունեց այս լուրերը և, գործելով նվազագույն դիմադրութեան ճանապարհով՝ իր ջանքերն

ուղղեց «հրկիզողներին» բռնելու կողմը, նրանց վորոնելով, իհարկե, բնակչութեան չունեալ խավերի մեջ:

Ընդհանուր անհանգստութունն ուժեղանում էր նաև գաղափարական քաղաքներից ստացվող լուրերով: Մոսկվայի հրդեհի հետ միաժամանակ մայիսի 10-ին այրվեց նամարյա ամբողջ Վորոնեժը (681 ծուխ): Մայիսի և հունիսի ընթացքում կործանիչ հրդեհներ տեղի ունեցան Բոլխովում, Սեվսկում, Գլուխովում, Մոժայսկում, Յարոսլավում, Միխայլովում, Սապոժկում, Պերեյասլավում և ուրիշ քաղաքներում:

Բուն Մոսկվայում հրդեհների կրկնվելու շափի և գաղափարական հրդեհների շափի մասին լուրերի հաստատումը մոսկվացիների անհանգստութունը հասցնում էր հուսահատութեան: Վտանգավոր սկսեց թվալ այնպես ապրելն, ինչպես ապրում էին մինչ այդ, այն է՝ աներում ու բնակարաններում: Սկսեցին դուրս գալ աներից, կարծես թե բոլոր շենքերն անպայման դատապարտված էլին հրի: Սրա հետ միասին այսպիսի դրութեան ամբողջ ծանրութունն ամենից առաջ ընկնում էր չքավորութեան վրա: Այն ժամանակվա մոսկվացիներից մեկը՝ գեներալ-մայոր Ի. Ա. Մասլովը, մայիսի 26-ին գրում է Պետերբուրգ իր ծանոթ Մեշչերսկուն. «Բոլոր աղամները (այսինքն չձառայող մարդիկ), թողնելով իրենց աները՝ մեկնում են գյուղերը: Ովքեր վոր գյուղ չունեն, բոլորը դաշտ են դուրս յեկեյ և ապրում են այնտեղ, իսկ չքավորները, ովքեր ձի չեն կարող գնել, իրենց վրա կրելով իրենց խղճուկ ունեցվածքը՝ տեղավորվել և ապրում են ամառի տեղերում, վորտեղ այսպիսի հրդեհներից փրկվելն էլ դժվար է, բայց մեր գնալ... Հորեր են փորում և իրենց ունեցվածքն այնտեղ թաղցնում, վորպիսի բան, յերեխ, լինական ամառացման ժամանակ էլ չկար»\*):

Մասլովի արտահայտութեամբ, մոսկվացիք գտնվում էին «այնպիսի սարսափի մեջ, վոր իսկապես նկարագրել չեմ կարող և ծնված օրվանից մարդկանց մեջ այսպիսի սարսափ չեմ տեսել և չեմ լսել. ինչ խոսենք մարդկանց մասին— յես ինքս դրանց թվումն եմ»:

\* «Իշխան Վորոնցովի արխիվը», 5-րդ դիրք էջ

Հրկիզումների գործերը քննելու համար Մոսկվայի ընդհանուր նահանգապետ Լեվաշեվն ստեղծեց քննիչ հանձնաժողով, վորը, Մասլովի կարծիքով, բավականաչափ յեռանդով չէր գործում «հրկիզողներ» բռնելու և քննութ՛յուն կատարելու ասպարեզում: Նահանգապետը հակամեա էր հրդեհների ծագումը բացատրել «աստծու բարկութ՛յամբ»: Իսկ Մասլովը գտնում էր, վոր չժըխտելով «աստծու թուլլութ՛յունը»՝ հարկավոր էր արտակարգ հանձնաժողով կազմել քննութ՛յան համար: Այս մասին նա զըրում էր մեղչերակուն այն հուսով, վոր վերջինս այս կարծիքն առաջ կքաշի Պետերբուրգի բարձր շրջաններում:

Յեվ իրոք՝ Մասլովի նամակը Մեղչերակուն ընկնում և կանցելի Բեստուժեվի ձեռքը, իսկ վերջինս այդ մասին տեղեկացնում է կայսրուհուն: Միքանի որ հետո «բարձրագույն հրամանով» կազմակերպվում է հատուկ քննիչ հանձնաժողով՝ արտակարգ լիազորութ՛յուններով: Յեվիզավետան հանձնաժողովի ղեկավար է նշանակում գեներալ-մայոր Ֆ. Ի. Ուշակովին՝ «չտրագործներին արագ արմատախիլ անելու և չար գործերը վերացնելու համար»:

Ուշակովի այս հանձնաժողովի գործունեյութ՛յամբ էլ սահմանափակվեց բարձրագույն կառավարութ՛յան ամբողջ գործունեյութ՛յունը հակայական ազատի վերաբերմամբ: Յերը հարյուրավոր ու հազարավոր բնակիչներ մնացին անթխեան և ապատուհնում էլին ամառի վայրերում, կառավարութ՛յունը Մոսկվայի վերաբերյալ իր հոգսերն ուղղեց միայն գեպի հրկիզողների վորոնումը, և անգամ այս քայլը թերադրված էր հենց բուն Մոսկվայից՝ այնպիսի անձնավորութ՛յունների կողմից, ինչպե՛ս գեներալ Մասլովն էր: Վոաքի կանգնեցվեց ամբողջ վոստիկանութ՛յունը: Չափազանց խիստ սկսեցին հետևել բնակիչների պահակութ՛յուն կատարելու վրա: Այս տեսակետից անճշապահ «ստոր» կոչում ունեցող մարդկանց պատժում էլին բազմաձյուղ մտրակներով: Մոսկվայում գտնվող զորամասերն ուժեղացվեցին նոր գումարաակներով: Զորամասեր կանչվեցին նույնիսկ գավառից:

Պետերբուրգի իր թղթակցին գրած նույն նամակում Մասլովը գոհունակութ՛յամբ հազորում էր, վոր նա ինքը բռնել և մի հրկիզող: Հետախուզական առյանի քննչական նյութերից մենք իմանում ենք այս բռնելու բնորոշ հանգամանքները: Բռնը

ված էր մի վոնն «պարապ մարդ»—Յուդա Իդնատյեվ: Նա Մասլովին կասկածելի չէ յերեացել նրանով, վոր յերը Պետրովկայում (մայիսի 25-ի ցերեկը) հրդեհ և սկսվել բրիգադիր Մարուրովի մոտ, նա՝ Իդնատյեվը, «չգիտես վորտեղից դուրս պրճնելով»՝ փախչում էր փողոցով «ամբողջ ուժով»: Մասլովը նրան բռնեց, ինքն սկսեց հարցաքննել, թե ո՞վ է նա, վոնտեղից է և ինչո՞ւ յե փախչում: Իդնատյեվը, վոր հարբած դուրս յեկավ, իր պատասխաններում բացահայտորեն շփոթվեց և կոպտեց գեներալին, գեներալն սկսեց իր ձեռքով ձեժել նրան, իսկ հետո ուղարկեց վոչ հետուկանդնած ուղեկալին: Արդեն պահակների հսկողութ՛յան տակ Իդնատյեվը խիստ հայնջում էր և ասում, թե «յին մեռած պիտի լինեմ, վոր այս գեներալին չգանեմ», ու թեև չէր ասում, թե հատկապես վոն գեներալին էր նա պատրաստվում «գանել», բայց Մասլովն այս սպառնալիքը վերադրում էր իրեն և նրա մեջ տեսնում Իդնատյեվի՝ հրդեհներին մասնակից լինելու ակնառու ազդեցույց: Մասլովը չսահմանափակվեց նրանով, վոր ինքը ձերբակալեց և ձեժեց Իդնատյեվին: Նա վոստիկանութ՛յանը գրավոր կերպով ներկայացրեց իր մանրամասն դիտողութ՛յունները, թե ինչու յե նա իր բռնած մարդուն համարում կասկածելի: Իսկ միքանի որ հետո, յերը ի գարմանաս իր նա իմացավ, վոր Իդնատյեվին գե՛ս չէն հարցաքննել հետախուզական առյանում, նա նորից դիմեց՝ շեշտելով իր վորսած «սրիկային» ամենաշտապ և ամենախիստ կերպով հարցաքննելու անհրաժեշտութ՛յունը: Մի խոսքով՝ սարսափահար Մասլովը մեժ համառութ՛յուն ցուցաբերեց մի մարդու հարածելու մեջ, վորին նա մայիսի 25-ից առաջ յերբեք չէր հանդիպել, բայց վորը դժբախտութ՛յուն ուներ գեներալի աչքին ընկնելու: Իդնատյեվը մոտ յերկու ամիս նստեց կալանդի մեջ և միքանի անգամ «գաժանորեն» հարցաքննվեց: Ուշակովի հանձնաժողովին չհաջողվեց Իդնատյեվի գործողութ՛յունների մեջ վորևէ տուճութ՛յուն գտնել հրկիզողների հետ և ստիպված յեղավ ազատելու նրան:

Բացի Մասլովից, քիչ ազնվական-անասերեր չկային, վորոնք իրենք արթնորեն հետևում էլին և զննում, թե արդյոք վորևէ տեղ հրկիզումների մեջ կասկածելի մարդիկ չկան: Մակայն ավելի հաճախ հարուստ անասերերը հետապնդում էլին կազմակերպում իրենց «ժառանգի» և այն դարպասի մարդկանց միջոցով, վորոնց վստահում էլին: Նրանք չէլին բավականանում սովորական փողոցային հսկողութ՛յամբ, վոր այդ որերին

ուժեղացավ՝ եր բազմաթիւ ուղեկալներով, պահակներով ու դե-  
տերով, վորոնք նշանակված եյին վորոշակի տեղերում և անցու-  
ղաւճ եյին անում քաղաքում: Յուրաքանչյուր աչքի ընկնող  
ազնվականական ազարակ վեր եր ածվել յորատեսակ զղջակի,  
վորին լքել եր տերը, բայց որ ու գիշեր գտնվում եր հավատա-  
րիմ ծառաների հսկողութեան տակ: Յեւ նրանից առավել նա-  
խանձախնդիրները, անփութութեան համար չկշտամբվելու պատ-  
ճառով, հաճախ ջանում եյին բռնել գեթ մեկ-չերկու հրկիզող:  
Բավական եր, վոր անցորդներից մեկի մտտ անհնային մի կիսատ  
մոմ կամ հրահան, կայծքար, ծծմբի կտոր, առհասարակ վորեւ  
զյուրավատ բան, նույնիսկ ուղղակի չոր լաթ կամ պարան, — սա  
արդեն «փաստանշան» եր: Այսպիսի վարկաբեկիչ իրերի տերե-  
րին քարշ եյին տալիս վոստիկանատուն, իսկ այնտեղից՝ հետա-  
խուզական աստիճան և գններալ Ուշակովի հանձնաժողովը: Բայց  
կարելի յեր ձերբակալվել նաև վոչ մի կասկածելի առարկա չու-  
նենալով:

Տարերային բացառիկ արհավիրքը բնակչութեան ունեւոր  
խավերի մեջ խուճապային սարսափ առաջացրեց ժողովրդից,  
ոտարացում և կատարյալ անվստահութեան դեպի նա: Վոմանք  
շտապում եյին Մոսկվայից փախչել իրենց գյուղերը, մյուսները,  
վոր իրենց կամքից անկախ մնացել եյին քաղաքում, հար-  
ձակվում եյին «ստոր» կոչում ունեցող առաջին հանդիպած մար-  
դու վրա և նրանում «հրկիզող» տեսնելով՝ շտապում եյին  
հանձնել նրան իշխանութեանների տնորինութեան: Իսկ իշխա-  
նութեաններն ամեն միջոց ձեռք եյին առնում «չարագործների  
արմատախիլ անելու» համար: Կառավարական գործողութեան-  
ների քիչ թե շատ դրական ծրագրի փոխարեն Մոսկվայի բնակ-  
չութեանն ի՞նչ վրա զգում եր միայն արգելքների ու խափանում-  
ների միջոցառումներ:

Այսպես, հրկիզումներով զբաղվող հանձնաժողովի լիազոր  
նախագահ Ուշակովը կարգադրութեան ուղարկեց մանուֆակտուր-  
կոնքիբային, այսինքն՝ ֆաբրիկաներն ու գործարանները տնորի-  
նող հիմնարկին, վորով պահանջում եր, վոր «այդ կոնքիբան  
բոլոր գործարանատերերին ամենախիստ կերպով հայտարարի և  
նրանցից ստորագրութեան վերցնի, վորպեսզի նրանք՝ գործա-  
րանատերերն իրենց աշխատողներին ու աշակերտներին պահեն  
իրենց գործարաններում աշխատանքի վրա ու չթողնեն փո-  
ղոցներում թափառել և նրանց վրա հսկել չեն եր նշառ

նա կեն»: Այլ կերպ ասած՝ ֆաբրիկ-գործարանային բանվոր  
ները, վոր ըստ յերեուշթին խիստ կասկածներ եյին հարուցում,  
դատապարտվում եյին առանց բացակայելու գործարանային  
շենքերում մնալու հատուկ հսկողութեամբ: Յեթե վորեւ մտաւ  
տեղի ունենա բանվորների մասնակցութեամբ, ապա Ուշակովն  
սպառնում եր, վոր «այն առանց այլապիշխան կրտսնայի իրենց  
իսկ գործարանատերերից»: Այս պահանջն ըստ յերեուշթին կա-  
տարվում ե յերկրորդ անգամ, վորովհետեւ թվականը նշված և  
հունիսի 12, այսինքն այն որը, յերբ արդեն հրդեհները դադա-  
րել եյին, և, ըստ յերեուշթին, արգելումը վորեւ ժամկետով չեր  
առհանափակվում...

Բնակչութեան ամբողջ խմբեր համարվում եյին առանձ-  
նապես անհուսալի և յենթարկվում եյին դաժան ճնշումների:  
Ազատորեն փողոցով գնացող գործարանային բանվորն արդեն  
ինքնին վտանգավոր մարդ եր թվում:

Բոլոր բնակիչներին ստորագրութեամբ հայտարարված եր,  
«վոր այս ամառ ժամանակ իրենց տներից դուրս չգան հրահան-  
ներով, կայծքարերով, արեթով և վորեւ բանով, վոր վերաբերում  
ե կրակին, ու չհամարձակվեն անցնել փողոցներով»: Վոստիկանու-  
թեանն առաջարկված ե հետեւ սրան «ժայրահեղ և զգաստ նա-  
խանձախնդրութեամբ»:

#### ՇՆՂԱՐՈՒՄ ՊՐԵՍՅԱՅՈՒՄ ՅԵՎ ՊՈԿՐՈՎՍԿՈՒՄ

«Հրկիզողներ» ձերբակալումը, վոր կազմակերպել եյին կա-  
ռավարութեանը և տնատերերն իրենք, անհիմն արգելքների դա-  
նադան միջոցառումները, իենթ ձերբակալումները, ընդհանուր  
«խուզարկութեանները», այսինքն բոլոր հարեանների հարցա-  
քննութեաններն այն անձանց մասին, վորոնք զժառանգութեան  
են ունեցել կասկածելիու «չարագործութեան» մեջ, — այս ամենը  
չափազանց հուզում և վրդովեցնում եր Մոսկվայի բնակչութեան  
մաստային: Հրդեհներն առանց այն ել ավերում ու կարիք եյին  
պատճառում հարյուրավոր ընտանիքների, ստիպում եյին մարդ-  
կանց թողնել տները և տեղավորվել բանջարանոցներում,  
դաշտում, ամայի վայրերում: Իսկ սրան ավերանում եյին նաև  
կաշկանդիչ կանոններ և այն, վոր մշտապես ամեն տեսակ տհա-  
ճութեան առիթներ եյին սպասվում վոստիկաններից ու զինվո-  
րական դետերից, հետախուզական աստիճանի կաշառակեր չինով-

նիկներէց, կառագած տերերից ու նրանց կամակատարներէց: Սակեղծութիւնս եր խուլ դաշտուցի միջնորտ, վորպիսին հարմար պայմաններում հեշտութեամբ կարող եր յերեան գալ խիստ բազմաման ձեռով: Այսպիսի յերեք կոնֆլիկտի մասին մենք տեղեկանում ենք հետախուզական նշութիւնէրէց: Նրանցից յերկուսը տեղի յեն ունեցել Մոսկվայի շրջակա Պոկրովսկոյէ գյուղում (այժմ Բակունինսկայա վոգոցի շրջանն իր նորանցքներով), վոր այն ժամանակ արդեն փաստորեն համարյա ձուլված եր քաղաքի հետ, բայց զեւես Մոսկվայի վոստիկանութեան իրավասութեան տակ չեր: Գյուղը պարտական վոստինա չեր, կառավարվում եր իր իսկ՝ կայսրուհու վոստինային վարչութեան տեղական գրասենյակի և տեղական գյուղացիներէց ընտրվածներէ միջոցով: Այս հանգամանքը Պոկրովցիներին դատում եր քաղաքացիներէց և նրանց մեջ քաղաքային վոստիկանական սատիճանավորներէց անկախ լինելու վորոշ գզացմունք առաջացնում:

Մայիսի 24-ին հետախուզական առյանից սատիճանավոր Տելեգինը զործուզվում և Պոկրովսկոյէ՝ 12 գրագունից և զինվորներէց կազմված խմբով: Նրանց հետ ուղարկվում և նաև «հրկիզող» Շիշլովը, վոր ձերբակալվել եր մայիսի 20-ին և խոստովանել՝ իր մտադրութեանը հրկիզումներ կատարելու, իբր թե Պոկրովսկոյէ գյուղացի Միխայլովի և նմանապես այնտեղ սպրող մի փայտավաճառի զրգմամբ: Տելեգինին տրված հանձնարարութեանն այն եր, վոր Շիշլովը ցուցումով գտնեն Պոկրովսկոյէ գյուղի այդ պայմանադրված բնակիչներին և ձերբակալեն: Սակայն Տելեգինի առաքելութեանը վերջացավ կատարյալ անհաջողութեամբ: Առաջին՝ Շիշլովը նրան տարավ մի ամայի, այրված տեղ, վորտեղ իբր թե գտնվում եր զրդիչ Միխայլովի խրճիթը: Յերկրորդ՝ զորախմբի գալուստն իրարանցման մեջ զցից գյուղացիներին: Նրանց հուզված ամբողջ շրջապատից Տելեգինին: Նրանցից առաջ յեկավ մի ձերուկ, յերեկ, ավազը, և սկսեց կշտամբել յեկվորներին. «մենք առանց այն ել քայքայվել ենք հրդեհից, իսկ դուք յեկել եք լեզվով ել մեզ քայքայելու»: «Յե՛վ այն կարծեցյալ ավազը հրամայեց (այսպես և այնուհետև Տելեգինը զեկուցել հետախուզական առյանին) մահամերձ ձեծել ինձ և խմբին, ու այն գեղացիք ձողերն առած, իսկ մյուսները՝ խանձված փայտեր, իսկ ուրիշները՝ աղյուսներ—ընկան մեր հետեհից»: Ծեծից ու հալածանքից նրանք հազիվ ձիերով

փախչում են վոստինային գրասենյակը: Ինքը՝ Տելեգինը մի հարված և ստանում աջ քունքին:

Մայիսի 26-ին կապիտան Չերեվինի այցելութեանն ավելի խայտառակ կերպով վերջացավ: Նա Պոկրովսկոյէ գնաց արդեն 32 հոգուց կազմված զորախմբով՝ ձերբակալելու Շիշլովը: «ամբաստանած» նույն մարդկանց: Բայց հենց վոր այս զորախումբը յերեաց Պոկրովսկում, հնչեց «կարաուլ» բացականչութեանը, մոտ վաղեցին բազմաթիւ մարդիկ, և կապիտանի ու նրա զորախմբի վրա սկսեցին թափվել քարերի ու բրերի հարվածներ: Չերեվինն ստիպված յեղավ փախչել: Գյուղացիք փախչողներին հետապնդեցին մինչև հրետանային բակը (նա գտնվում եր այնտեղ, ուր այժմ Հոկահմբերյան կայարանն է): Այստեղ թաղնված զորախմբից պակասում եր 9 մարդ. նրանք հետ ելին մնացել և հետո ձեծված բերվել պարտական գրասենյակ:

Յերրորդ ընդհարումը տեղի ունեցավ մայիսի 24-ին՝ Նովինսկի վանքի մոտ, վոր գտնվում եր ներկայիս Բ. Նովինսկի նրբանցքում: Այստեղ ուղեորվեց հետախուզական առյանի քարտուղար Պոպովը՝ զրագուններով և ձերբակալված «հրկիզող» Ալեքսեյ Կրուտոյի հետ, վորը հարցաքննվելիս ցուցմունք և տվել թե իբր նրան համոզել և հրկիզել փայտավաճառ Պյոտր Իվանովը, վոր սպրում և Նովինսկի վանքի մոտ: Պոպովին հանձնարարված եր գտնել Պյոտր Իվանովին, խուզարկել և ձերբակալել նրան: Կրուտոյը նրան ցուցց ավեց մի բակ, վորը գտնվում եր հենց վանքի զիմաց: Սակայն այս բակում վոշ մի Իվանով չկար, այլ այնտեղ սպրում եր վրացուհի Զիմատանդարան, վոր վոշ մի խոսք ունեւերն չեր խոսում: Նա խիստ բողոքեց խուզարկութեան զեմ, վոր Պոպովը ուզում եր սկսել նրա տանը, և սկսեց ձշալ: Նովինսկի վանքն այն ժամանակ տրված եր վրացիներին. նրա վանահայրը վրացի Եվդեմոսն եր. վանքում սպրում եր վրացական արքայորդի, վրացական նախկին իշխան Սիմեոնի այրին: Վանքի շուրջը զերազանցապես վրացական աներ ելին: Ըստ ելութեան, սա վրացական արվարձան եր: Զիմատանդարայի կանչին արագորեն հավաքվեցին Պոպովի զորախմբից ավելի վրացիներ: Լավեցին յեռանդուն բողոքներ ու հայհոյանք:

Այդ բակում և բակի շուրջը հավաքվեցին մոտ 100 վրացի և սկսեցին զորգոռալ իրենց լեզվով և, դուրս պոկելով բանջարանոցի բրերն ու վոստինչ չհարցնելով, սկսեցին այն քարտու-

դարի գորախմբին խփել ըրերով ու բուռնցքներով և փողոցումն ել ծեծում եյին զինվորներին. իսկ բերված կարանավոր Կրուտոյն այսպիսի մեծ ազմուկի մեջ քիչ մնաց, վոր արանքը ճգեր»:

Տուրուզմբոցը կարողացավ զազարեցնել մի վրացի, վոր, յերևի, հեղինակութուն ուներ նրանց մեջ: Դուրս գալով վանքից և խմանալով Պոպովից նրա գալու նպատակի մասին՝ նա վրզով ված վրացիներին համոզեց, վոր գորախումբը հասցեն շփոթել և, և վոր նա վորոնում և իրենց մոտ գոյութուն հունեցող փայտափաճառի:

Հետաքննական նյութերի մեջ գորախմբերի հետ ուրիշ վորևե ընդհարման վերաբերյալ ցուցումները մենք չենք հանդիպել: Այդպիսի ընդհարումներ, հավանաբար, չեն ել յեղև: 18-րդ դարի կեսերին Մոսկվայի վոստրիկանական սեփմն արգեն աշնպիսին եր, վոր կազմալուծված և անգին մասսան անընդունակ եր կռիկախով յելույթների, նույնիսկ աշնպիսի պրիմիտիվ յելույթների, վորպիսիք տեղի ունեցան Պոկրովսկում և վրացիների հետ: Նախկին արվարձանային, թեև թույլ, կազմակերպութունը վերացվեց: Բացի դրանից, մայիսի 24—26-ի փորձից խրատված՝ բարձրագույն իշխանավորները կարգադրեցին այսուհետև ամբաստանված մարդկանց հետևից ուղարկել զինված գորախմբեր և այն Կլ՝ ավելի մեծաքանակ, իսկ հրամանատարներին կարգադրում եյին, վոր յեթե վորևե տեղ ամբաստանված մարդկանց ձերբակալելիս հակառակութուն կատարվի և ուղարկված խմբերին ծեծեն, այս դեպքում, վորքան հնարավոր և, ջանալ բռնելու այդ կռվողներին, իսկ յեթե նրանք գոռեն, ապա ամենամայրահեղ դեպքում կարգադրել Փուղեյաններից յերեք անգամ կրակել վոտքերին և զրանով սարսափ տալ ու բռնտել»:

Մենք չենք հասկանա այս «հակառակութունների» իմաստը, յեթե թերազնահատենք ամբողջ անվատահութունը զեպի կառավարութունն ու նրա գործակալները, շարքային բնակչության այն խոր համոզմունքները, վոր ազնվականական կառավարության որգաններն անընդունակ են պաշտպանելու իսկական ժողովրդական շահերը, և վոր նրա ստորին, հաճախ փաճառված գործակալներն ի վիճակի չեն վոչ անկողմնակալ լինելու, վոչ ևլ վարպետ: Յեթե պարոնայք ազնվականներն իրենք, հույս հունենալով բարձրագույն իշխանության վրա, փախչում եյին Մոսկվայից և կազմակերպում Մոսկվայի իրենց աների ինքնուրույն

պաշտպանութունը, ապա բնակչության ստորին խավերը պատրաստ եյին ըրերի վրա ընդունելու այս բարձրագույն իշխանության դեպքաններին:

## Ա Ջ Ո Ւ Զ Ա Խ Բ Ո Ն Ո Ւ Մ Ե Ն

Հրկիզողներին բռնելը և նրանց գործերի քննութունը կառավարական հիմնարկներից վարում եր, նախ՝ միայն վոստրիկանութունը, հետո՝ հետախուզական ատյանն ու Լեվաշովի հանձնաժողովը և, վերջապես, հունիսից մինչև սեպտեմբեր՝ Ուշակովի հանձնաժողովը: Ամբողջովին հավատացած լինելով հանդերձ, վոր հրդեհներն առաջնում եյին զլրտավորյալ հրկիզումներից, հիշատակված հիմնարկներից վոչ մեկը, սակայն, մի վորևե հիմնավոր յենթադրութուն չուներ, թե եյապես ով կարող եր շահագրգռված լինել հրկիզումների մեջ: Չերբակալութունները կատարվում եյին կուրսերն, և քննչական մարմինները յեռանգով ձեռնարկում եյին կարանավորվածների քննութունն ու տանջելը, ինչպիսի անիրավացի մեղադրանք ել բարդեյին նրանց վրա:

Այսպես, Յարուսլավի մոտ ինչ վոր տեղ բռնվում և Մոսկվայից փախած մի զինվոր՝ Բիկովը, վոր Մոսկվայից ծածուկ փախչում եր իր հայրենիքը: Բռնվելով՝ նա սկսում և շփոթված բացատրել թե ով և ինքը և վնասողից: Ճանկանալով թաղանիստ իր փախուստը՝ նա սկսեց ուժ տալ յերևակայությանը, թե իբր անտառում հանդիպել և 34 հոգի զանազան աղբության մարդկանց՝ լեհերի, պարսիկների, թուրքերի, ինչպես և Մոսկվայի 4 բանվորի՝ ժուրավլյովի մահուղի դործարանից: Նրան հանդիպած մարդիկ, վորոնց նա ժամանակավորապես միացավ, իբր թե նրան ստել են, վոր իրենք հանձնարարութուն ունեն Լեհական թագավոր Լեշչինսկուց՝ այրել Մոսկվան և ոռւսական ուրիշ «նշանավոր» քաղաքներ: Յարուսլավի տեղական իշխանութունը լուրջ նշանակութուն ավեց Բիկովի ցուցմունքին, և կողմից դրագունների, զինվորների, նորակոչիկների, Յարուսլավի բնակիչների ու կառապանների մի ամբողջ գորախումբ՝ «ցույց արված շարագործների խումբը բռնելու համար»: Հասկանալի չե, վոր վոչ վոքի չգտան: Ինքը՝ Բիկովը՝ ուղարկվեց Մոսկվա, վորտեղ ստաջին շրջանում վորձեց իր հերյուրանքով զբաղեցնել նաև Ուշակովի քննչի հանձնաժողովի ուղարկութունը: Բայց դեպքում տանջանքի յենթադրվելով՝ նա մանրամասնութուն



ների վերաբերյալ տրված հարցին պատասխանելիս ստիպված երկուստովանել, վոր «չարագործների խմբի» վերաբերյալ իր ամբողջ պատմածը միանգամայն հերյուրանք է: Բիկովին յերեք անգամ ամենցին, ցից հանեցին և այրեցին: Վերջիվերջո հանձնաժողովը թողեց լինական դավերի վերաբերյալ հիպոթեզը, իսկ Բիկովի մասին հանեց հետևյալ վորոշումը: «Չարամիտ և արդելված բաներ տարածելու համար, վոր մարդկանց մեջ առաջացնում է սարսափ, խառնակութուն ու անհանդստութուն, նրան հարկ է մահվան պատիժ տալ»:

Արտասահմանից ուղարկված հրկիզողների վերաբերյալ նման հերյուրանքներ հնարել էլին փախտակ գյուղացի Դուբնենկոն և փախտակ նորակոչիկ Ստեպան Վորոբյովը: Վերջինս նպատակ ունենալով «փախուստի համար իր պատիժը մեղմացնել»՝ քննիչների մոտ գլխից դուրս տվեց, և նրան հավասացին, թե իբր նրա հետ միասին բանտում նստած զինվոր Բաուլովը նենդ թուրքիայի գործակալն է: Իբր թե Բաուլովը 15 տարի շարունակ թագնավել է արասահմանում և այժմ վերադարձել Ռուսաստան՝ կաշառված Թուրքիայից, վեց ուրիշ պետութունների հետ միասին՝ ուստական քաղաքները հրկիզելու համար: Մոսկովայի հրդեհների մեջ թուրքիայի միջամտության վերսխան քննիչ հանձնաժողովը հավանական համարեց, լրջորեն քննեց ինչպես Բաուլովին, այնպես էլ Վորոբյովին և յերկուսին էլ խոշտանդեց բազմիցս աված ամենջանքներով:

Հանձնաժողովին շատ անհանդստութուն պատճառեցին մի քանի ձերբակալվածների այն ցուցմունքները, թե հրկիզումների համար նրանց կաշառել են փայտավաճառները, վորոնք շահագրգռված էլին հրդեհներով, «վորպեսզի փայտն ավելի լավ գնեն»: Նշվում էլին այս գրդիչների անուսները, այն առևտրական շարքը, վորտեղ նրանք առևտուր էլին անում: Հանձնաժողովը փորձեց գտնել այսպիսի «ամբաստանված» փայտավաճառների և չեք գտնում: Նա խմբեր եր կազմում խուզարկելու և ձերբակալելու համար, հարցաքննում եր հարևաններին, քննության համար կանչում եր ավյալ ուսյոնի բոլոր փայտավաճառներին, բունում եր համազգանուններին ու համանուններին, տեղեկանքներ եր հավաքում մաքսատնից, բայց ամեն ինչ ապարդյուն եր անցնում: Վոչ ամբաստանված անձինք, վոչ էլ մի վորեք փայտավաճառի մեղավորության սեյալ ապացույց չբանվեցին:

Մայիսի 22-ին խաղաղ կերպով Մոսկվա յեկած գարայցի

մի վաճառական՝ Պիրոժնիկովը մեծ քանակությամբ ձու յեր բերել վաճառելու: Ի դժբախտություն նրա, այդ որերին հրդեհներ տեղի ունեցան, և խոսակցություններ սկսվեցին հրկիզողների վերաբերյալ: Չարայգեյում նրան հանդիպեց մի տաքլուխ սպա, խուզարկեց նրան և դատվ չափազանց «կասկածելի» յերկաթե ողակապ՝ հազցրած գոտու վրա և փաթաթած լաթով: Ու մի ամբողջ ամիս բանտում նստեց Պիրոժնիկովը, մինչև պարզվեց, վոր նրա ողակապը սարսափելի գործիք չէ, այլ բանդաժ, վորով նա կապում եր իր իրանը, «վորովհետև նրա փորոտիքը թափվում է», իսկ այդ ողակապը նա լաթով փաթաթել եր, վորպեսզի «չսղմի»:

Քննիչ հանձնաժողովը հավասարապես կասկածելի յեր համարում այն բոլոր անձանց, ում բերել էլին անպատասխանատու վոստիկաններն ու հետախուզական որդանները: Անցնելով քննության՝ հանձնաժողովը վոչ մի դեկավար, գեթ յենթադրական, կարծիք չունեք հրդեհների ծագման մասին. նա չեք կարողանում հանցագործությունների հետքերը գտնել նաև քննության քննարկում: Նա խարխալում եր: Ասենք՝ հանձնաժողովը հիմք չունեք էլ վատհորեն տեսլու, վոր առևասարակ դիտավորյալ հրկիզումներ կային: Իսկ մինչդեռ նրա ամբողջ խնդիրը հրկիզողներ վորոնելն եր: Նա չեք արդարացի իր արտակարգ կոչումը, յեթե չգտնեք հանցագործներ, վորոնք «հրկիզում են կատարում»: Այստեղից էլ բղխում է նրա պատրաստակամությունը՝ լսելու ամեն տեսակ, նույնիսկ անմիտ կոհում:

Բայց հրկիզումները բացահայտելու մեջ վորոշակի գծի բացակայությունը բնավ չեք նշանակում, վոր հրկիզողների վորոնումները գերմ էլին գասակարգային մոտեցումից: Ընդհակառակը, քննչական հանձնաժողովի, հետախուզական ատյանի և վոստիկանության ամբողջ գործունեյության մեջ նկատվում եր այն կանխակալ կարծիքի վճռական գերակշռումը, թե հրդեհների մեղավորներին կարելի յե գտնել միայն չունեք բնակչության մեջ, վոր նրանց չափաք է վորոնել աղնվականների և առևասարակ ունեք մոսկվացիների մեջ:

Ուշակովի ամենահնազանդ գեկուցման կցված «ժայրաքաղերից» մեղ հայտնի յեն անունները և սոցիալական դրությունը 100-ից ավելի մարդու, վորոնք ձերբակալված են և այս կամ այն չափով քննության յենթարկված՝ հրկիզումներ կատարելու մեղադրանքով: Յեզ անա այսպիսիների վոչ թվում չկար վոչ մի

ազնվական: Նրանց հակայական մեծամասնությունը բնակչության ստորին խավերից եր: Այստեղ կային գործարանային բանվորներ (16), զինվորներ և առհասարակ զինվորական ստորին աստիճաններ ունեցողներ, նրանց կանայք և այրիներ (26), դարպասի յերկսեռ մարդիկ (14), յերկսեռ գյուղացիներ (17), արհեստավորներ (8), կառապաններ և ստորին սպասավորներ (6) և «պարապ» մարդիկ (4): Ճորատերերը, գործարանատերերը, գործատերի հրամանատարները, անասնապետ սովիդ մարդիկ կասկածից զուրս էին:

Գննության յենթարկվածների թվում մենք հաշվեցինք վաճառականի կոչումով 14 հոգի, այսինքն՝ բնակիչների այնպիսի կատեգորիայի մարդիկ, վորոնք կարող են համարվել սովիդ Բայց մտաիկ քննությունը ցույց է տալիս, վոր 14-ից միայն 3-ն էին իսկապես առատուր անող վաճառական: 18-րդ դարի կեսերին «վաճառական» տերմինն ընդգրկում էր նաև նրանց, ովքեր հեռագայում անվանվում էին մեղհաններ և դասվում ստորին հարկատու դասի շարքը: Կարելի չէ վորոշակի ասել, վոր վաճառականությունն իր ընդհանուր մասսայով, չխոսելով արդեն վերնախավի մասին, գործարանատերերի ու կապալառուների մասին, քննության չէր յենթարկվում:

„Ք Ա Վ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ո Ւ Ա Ջ Ն Ե Ր“

Բարձրագույն իշխանությունը մեծ նշանակություն էր տալիս Մոսկվայի հրդեհների պաճառների քննությանն ու մեղավորներին հայտարարելուն: Մոսկվայի զանազան աստիճանի չինովնիկներից Ուշակովի կազմակերպած զրասնյակն այն ժամանակվա համար բազմամարդ էր և տեղավորված՝ հատկապես առանձնացված ասն մեջ: Ուժեղացված զորախմբերն անհամար ձերբակալություններ էին կատարում ամբողջ քաղաքում և նույնիսկ դափառում: Չնդանում անքուն աշխատում էին դահիճները:

Իրականում Ուշակովի հանձնաժողովը վոչ մի սիստեմատիկ հրկիզում, վոչ մի հանցապարտ կազմակերպություն այդպես էլ չբացեց: Նա չհայտարարեց նաև առանձին մեղավորներ: Ձերբակալվածներից շատերը դժամ հարցաքննություններից հետո ազատ արձակվեցին, վորովհետև պարզվեց, վոր նրանք ամենևին մասնակից չեն «հրկիզությանը»: Ավելի շատ էին այն անձնավոր

րությունները, վորոնք հանձնաժողովի վորոշմամբ անմեղ էին ճանաչված հրկիզման մեջ, բայց չէին ազատված, այլ հանձնված էին զանազան հիմնարկների «ըստ պատկանելույն»: Այսպես, փախստակ ստորին զինվորական աստիճանավորները հանձնվում էին զինվորական գերատեսչություններին, հրդեհից տուժածների զանազան ունեցվածքի գողության մեջ բռնվածները՝ հետախուզական ատյանին, վաճառականի կոչում ունեցող այն անձինք, վորոնք չէին զբանցված հարկազբերում, ուղարկվում էին մագիստրատ (քաղաքային վարչություն), գործարանային բանվորներին ուղարկում էին գործարանատերերին, և այլն:

Բայց ինչը մարդու հանձնաժողովը գտավ ծանր մեղավոր, և վորոշեց նրանց մահապատժի դատավճիռը ներկայացնել կայսրունու հաստատությանը: Կնշանակի՝ մարդկանց մի փոքրաթիվ խումբ խիստ զատվեց ձերբակալվածների ընդհանուր թվից: Նրանք չէին արդյոք, վոր, ըստ հանձնաժողովի քննության առաջացրել էին Մոսկվայի հրդեհները:


Սակայն յեթե ծանոթանանք դատավճիռի հանգամանքներին ու զրդապատճուներին այս կպարզվի, վոր այս մահվան դատապարտված մարդիկ էլ հրդեհներ չեն առաջացրել Մոսկվայում:

Հիրավի զբանցից յերեքը միայն տարածողներն են: Սրանք այն փախստակներն են, վորոնց մասին հիշատակվեց վերև՝ Թիկովը, Վորոբյովը և Դուբնենկոն: Նրանք մեղավոր էին այն բանում, վոր, բռնվելով, հնարել են կամ կրկնել ուրիշների հնարածը՝ Ռուսաստանում հրդեհներ տաղացնող ոտարերկրյա գործակալների մասին, բայց նրանք իրենք, համենայն դեպս, հրկիզողներ չեն յեղի:

Չորրորդ՝ փախստակ Նասոնովը մահապատժի արժանի համարվեց այն բանի համար, վոր իմանալով իր ընկեր, նույնպիսի փախստակ «Փուրլեր» Կոլբովից նրա մտադրության մասին՝ Մոսկվայում այրելու իր նախկին կալվածատիրոջ տունը, այս մասին վոչ մեկին չի հայտնել: Իսկ ինքը մտադրություն չի ունեցել վորևե հրկիզում կատարելու:

Մահվան դատապարտվեցին յերկու հոգի էլ—դարպասի մարդ Կուպրիանովը և դեղձկուհի Յերմոլայեվան: Նրանք մեղավոր էին հրկիզման մեջ, բայց վոչ Մոսկվայում: Նրանցից անաջինը խրճիթ է այրել Բորովսկի դավառում, Դուրվո գյուղում, իսկ յերկրորդը՝ Ռյաժսկի դավառի Արխանգելսկ գյուղում: Այս յերկու հրկիզումն էլ Մոսկվայից զուրս կատարվել էին անձնա-

4859-87



կան թշնամութեան հողի վրա, ընտանեկան անհամաձայնութեանից, յերկու հրկիղումն ել կատարվել են հունիսի կեսերին, այսինքն՝ Մոսկվայի հրդեհների շրջանն անցնելուց հետո: Կուպրիանովն ու Յերմոլայեվը Մոսկվայի հրկիղողների գործին կպցվել եյին կամայականորեն:

Մահվան դատապարտվածներէից յոթերորդը մահուղի մեծ գործարանի բանվոր Ալեքսեյ Կրուտոյն էր, «Մոսկվայում՝ Կիսլովկայում մի բնակչի տուն այրելու նրա մտադրութեան համար»: Այն նույն Կրուտոյը, վոր հարցաքննութեան ժամանակ պնդում էր, թէ իբր հրկիղումների համար նրան կաշատել է խորհրդավոր փաշտավաճառ Իվանովը, վորն իբր թէ սպրում էր Նովինսսկի վանքի մոտ: Կրուտոյը խոստովանեց, վոր նա ուղում էր Կիսլովկայում ինչ վոր տուն այրել: Իսկ փաստորեն նա վոչինչ չի այրել: Հետեաբար Կրուտոյն ել չէր կարող մեղավոր լինել զեթ մի հրդեհի համար:

Բարոն Սարոգանովների ազարակը հրկիղելու նման մտադրութեան համար ել մահվան դատապարտեց նաև դարպասի մարդ Իլյինի այրին: Հարցաքննութեան ժամանակ նա ցուցմունք տվեց, վոր պատրաստվում էր հրկիղել Սարոգանովների ազարակը, հույս ունենալով «չեթե այրեյի, ինձ համար վորեւ ոգուտ կատանայի, և այդ այրելու համար մի մոմի կտոր վերցրի այդ Սարոգանովի տան մոտից, իսկ կրակն ուղում էյի վերցնել վորեւ և տեղից»: Հանձնաժողովն Իլյինայի գործողութեանների մեջ, բացի հանցավոր մտադրութեանից, վոչինչ չգտավ, այնինչ նրան նույնպես մահապատիժ հասավ:

Վերջապես, մահվան դատապարտվածներից վերջինի, իններորդի՝ զինվորի վորդի՝ մահուղի գործարանի բանվոր Կոզմա Կոզմինի վերաբերյալ հանձնաժողովը հաստատեց, վոր նա վոչ միայն մտադրութեան ունեւր, այլե փորձել էր հրկիղել: Նա բռնուվեց հենց այն մոմենտին, յերբ այրվող մոմը զնում էր կոմս Ռադումովսկու զոմի տակ՝ Գորոխովոյե դաշտում: Հարցաքննութեանների ժամանակ Կոզմինն իր սպարդյուն փորձն սկզբում բացատրում էր ինչ-վոր ճաշակրդակի տեր Ալեքսեյեվի կաշատումով, իսկ հետո խոստովանեց, վոր այդ ինքն է արել հարած վիճակում: Ինչ աղղեցութեամբ ել վոր գործելու լինեւր Կոզմինը, միևնույն է, նրա փորձը չէր կարող հրդեհ առաջացնել, և հրդեհն ել այդ որը (մայիսի 23-ին) սկսվեց վոչ Ռադումովսկու ազարակից: Այսպիսով, մեր առջևով անցան բոլոր իննը գլխա-

վոր հանցագործները, և պարզվում է, վոր նրանցից վոչ մեկը հրդեհների փաստական մեղավորը չէր, և հենց ինքը՝ հանձնաժողովը գրանցից վոչ մեկին այդպիսին չէր համարում:

Կարևոր չի վճռապես ասել, վոր Մոսկվայի «չարամիտ հրկիղման» բոլոր յենթադրութեանները ջարդուփշուր յեղան: Այն իննը հոգին, վորոնց վրա թափվեց արտակարգ պատիժը, ծառայում էյին միայն իբրև «քաղութեան նոխաղ»: Նրանցից վոչ մեկին չի կարելի անվանել վոչ վորեւ հանցապարտ կաշատկերպութեան անդամ, վոչ մենակ հրկիղող, վորը զեթ անուղղակի ճանապարտվ առաջացրել է Մոսկվայի մայիսյան հրդեհները: Իժմար է յենթադրել, վոր իր իսկ՝ Ռադումովի և նրա զինակիցների համար ակնեւր չլինեւր այս մարդկանց մեղադրանքի չափազանցած լինելը: Մա մի կեղծավորութեան էր, վոր թաղցնում էր չարագործներին վերացնելու բազմախոստում ձեռնարկութեան բացահայտ ձախողումը:

Բայց պակաս կեղծավորութեան չկար նաև այն բանում, վոր մահապատիժ էյին տալիս մարդկանց՝ ամենուրեք առաջացած հրդեհների պատճառների վերաբերյալ զանազան, թեկուզ անմիտ լուրեր «չարամտորեն տարածելու» համար: Այս լուրերն առաջանում էյին այն բանի հետեւանքով, վոր բնագլխով զինվորական պահակազորները, զետերն ու հեծելազետերը, ցերեկային ու զիշերային ուժեղացրած պահակները, ձերբակալելու համար զորախմբեր ուղարկելը, բնակչութեան զանազան խմբերի ընդհանուր հարցաքննութեանները հուղում էյին բնակչութեանը, որա հիման վրա առաջանում էյին ամեն տեսակի ասեկոսեհներ, մոռյլ տրամադրութեաններ ու անհանդիստ սպասումներ: Իսկ նրանց, ովքեր արտահայտում էյին այս տրամադրութեանները, Ռադումովի հանձնաժողովը պատժում էր իբրև հանցագործների: Ընդ վորում դարձյալ բնորոշ է, վոր պատասխանատվութեան էյին կանչվում բնակչութեան միայն չուսուոր, շահագործվող խավերը: Որինակ՝ մայրը Զիմինսկու դարպասի մարդ Սիդորովին վճռեցին մտրակածեծ տալ հետեւյալ հանգամանքներում: Զամոսկվարեչեյում, վորտեղ նա սպրում էր իր տիրոջ հետ, մայիսի 25-ին նրանց բնակարանից վոչ հեռու հրդեհ ծագեց: Սիդորովը բարձրանում է տանիքը, նայում հրդեհին ուրիշ հետաքրքրվողների հետ և ասում, թէ «Պետրոսի որն ամբողջ Մոսկվան կայրվի»: Այս խոսքերը նա լսել էր սպա Շամարզինից, վորն իր տիրոջ հյուրն էր: Վերջինս հաստատեց այս: Սակայն քննիչ հանձնաժո-

դովը չպատժեց վոչ պրապորշչիկ Շամարդինին, վոչ էլ մայոր Զի-  
մինսկուն: Իսկ Սիդորովը դատապարտվեց «անողոք պատժի»  
Կարմիր հրապարակում, «վորովհետև նա՝ Սիդորովը, լսելով այս-  
պիսի խոսքեր, վոչ մի տեղ չի հայտնել, իսկ ինքն այսպիսի ան-  
վայել բան տարածելու պատճառ է դարձել»:

### ՅԵՂԵԼ ԵՅԻՆ ԱՐԴՅՈՔ ՇՐԿԻՋՈՒՄՆԵՐ

Ուշադովի հանձնաժողովի հարցաքննությունների ու հետա-  
խուզությունների ազքատիկ արդյունքներն ինքնին դեռևս քիչ  
վկայություն են տալիս հրկիզումների իրոք բացակայելու վերա-  
բերյալ: Բայց անտարակուսելի չէ, վոր հրդեհները հիմնական  
պատճառն ինչ վոր դիտավորյալ հրկիզում չէր: 1748 թ. մայի-  
սյան հրդեհների յերկար շղթան հրկիզողներից չառաջացավ:

Մոսկվան առհասարակ շատ և այրվել: Մոսկվայի հրդեհնե-  
րի վիթխարի քանակը, վոր դարմացրել է արտասահմանցիներին,  
շարունակվում էր մինչև 18-րդ դարի վերջը:

Դարնանային ամիսներին առանձնապես հաճախ էլին հըր-  
դեհներ պատահում, և կրակն անարգել զբոսնում էր կուտակված  
փայտե, իսկ մասամբ էլ՝ հարդե Մոսկվայում: 1748 թ. մայիսին  
բացառիկ նպաստավոր յեղանակ էր հրդեհների առաջացման և  
տարած մանհամար: Գեներալ Մասլովի՝ մեր քաղաձ՝ մայիսի 26-ի  
նամակում հաղորդվում էր, վոր այն ժամանակ «շատ շոգ է և  
հոգձ, հաճարը չորացել է, իսկ գարնանացանը չի աճում»: Ու-  
րեմն դարմանալի չէր, վոր այսպիսի հոգմառատ յերաշտին առանց  
վորեև հրկիզողի բազմիցս հրդեհներ էլին ծագում և արագորեն  
տարածվում: Յեթե, չնայած իր դիտողություններին, նույն Մաս-  
լովը հրդեհների ծագումը վերագրում էր չարագործ հրկիզողնե-  
րին և լրջորեն մտահոգված էր նրանց բռնելով, ապաստ ամենից  
առաջ վկայում է սոցիալական հակամարտության ուժի մասին  
ճորտատիրական Մոսկվայում: Դասակարգային աչալրջության  
վիճակը սովորական վիճակ էր, իսկ կրիտիկական մոմենտներին  
այն սրվում էր արտակարգ չափերով:

Հետախուզական դիվանատունը դեռևս մինչև քննիչ հանձ-  
նաժողով կազմվելն առանձին յեռանդով, մտրակներ ու ճյուղա-  
վոր մտրակներ գործածելով՝ ջանում էր թարմ հետքերով պար-  
զել այն հանգամանքները, վորոնց մեջ սկսվում էլին հրդեհ-  
ները, և ամենուրեք հաստատում էր, վոր հրդեհի պատճառը կրակի

հետ անդգուշ վարվելն է, հսկողության թերացումը կամ դեռ մի  
բան էլ, բայց վոչ ամենևին հրկիզումը: Այսպես, առաջին ամե-  
նամեծ հրդեհը մայիսի 10-ին բռնկվեց «Իխտո և սարսափելի  
քամու» ժամանակ, սկսվելով դարբնոցի տանիքից, վորն այդ  
որը յեռանդով աշխատում էր: Դարբնոցը տեղավորված էր քա-  
ղաքի շատ կուտակված մի մասում, նախկին Մյասնիցկայա փո-  
ղոցի սկզբում, ներկայիս Ձերժինսկու անվան հրապարակի մոտ:  
Յերկրորդ հրդեհը մայիսի լույս 15-ի գիշերն առաջացավ Գոն-  
չարեյում, սկսվելով բուլկանոցից («բոքոնի տնակից»), այս լույս  
կիրակի գիշեր բաղում յերեք վառարան էր վառվում  
սայլաներ թխելու համար, և միանգամայն ճշմարիտ են տնա-  
տիրոջ ցուցմունքներն այն մասին, վոր հրդեհն առաջացավ  
առանց վորեև հրկիզման: Մայիսի 23-ի մեծ հրդեհը Պոկրով-  
սկում սկսվեց շարքային գեղջկուհի Յեվդոկիմովայի խրճիթից-  
ինքը՝ անտիրուհին վորեև գրդում չուներ այրելու իր խրճիթը,  
իսկ կողմնակի մարդկանցից վոչ վորք վրա նա չէր կասկածում:  
Ճիշտ այսպես էլ ուրիշ ժամանակ հետախուզական առյանը հըր-  
կիզման վորե և նշան չի գտել: Ուստի ազացուցված չպիտի հա-  
մարել այն հաստատ համոզումը, թե հրդեհներն առաջացրել են  
«չարագործները»: Նրանք առաջացել են կեղեքիչ փոքրամասնու-  
թյան և բնակչության մասայի թշնամական հարաբերություն-  
ների մթնոլորտից:

Մրա հետ միասին միանգամայն թույլատրելի չէ այն յեն-  
թադրությունը, վոր յեղել են հաջողված և չհաջողված հրկիզում-  
ների առանձին գեպքեր: Այսպիսի վարմունքների նպատակներն  
ու շարժառիթները կարող են լինել տարբեր:

Հրկիզումը, «կարմիր աքլորը», իբրև վրեժի ու պայքարի  
մի ախտ, առհասարակ հաղվադեպ յերեուցթ չէր փայտյա Ռու-  
սաստանում: Մոսկվան բացառություն չէր կարող լինել, և այն-  
տեղ սոցիալ-քաղաքական պայքարը մեկ անգամ չէ, վոր գու-  
գորդվել է մեծ հրդեհները հետ: Այս գեպքում պատահում էր,  
վոր յերկու կովող կողմն էլ մեկը մյուսին մեղադրում էր հրկի-  
զումների մեջ: 18-րդ դարի կեսերին Մոսկվայում հսկայական  
քանակությամբ անտուն և անապահով մարդիկ կային, վորոնք  
զժգոհ էլին իրենց վիճակից: Մոսկվայում բազմանում էր դար-  
պասի, ճորտ գյուղացիների, հրաժարական տված և փախստակ  
զինվորների, գործարանային անազատ բանվորների ու ճորտա-  
տիրական հասարակակարգի այլ խորթ զավակների թիվը, վորոնք

կազմակերպված պայքարի ձևը չզրիտեցին: Նրանցից աչնպիսի-  
ները, վորոնք չէին հաշվում իրենց գրության հետ, կիրառում  
էին, յիժե կարելի չե աշտպես արտահայտվել, քրեյական տե-  
սորի մեթոդներ՝ հրկիզում ու ավառացություն: Հենց այս ժամա-  
նակաշրջանում Մոսկվայի մոտ խիստ զարգացավ բանդիտիզմը,  
մայրաքաղաք տանող ճանապարհներին դործում էին ավաղա-  
կանները, վորոնք հավաքվում էին մեծ մասամբ մայրաքաղաքի  
բնակչության ընչազուրկ ստորնախավերից: Մասսայի իրավա-  
դրվության և մի խումբ ազնվականների ու կապալառուների ան-  
բաժան օրբապետության պայմաններում բողոքող մարդու հա-  
մար հրկիզումը յերբեմն պայքարի նպատակահարմար ակա-  
ն էր թշնամու դեմ, անտեսական և արտասնտեսական բռնու-  
թյան դեմ:

Գեներալ Մասլովը Պետրովկայում բռնել է իգնատյիվ «պա-  
րապ մարդուն», նրան համարում է կասկածելի և, իրեն մի փաս-  
տարկ այն բանի, վոր բռնվածն իրոք հրկիզող է, մեջ է բերել  
հետևյալ պատճառաբանությունը. «Այսպիսի մարդը վերավորանքի  
դեմ ուրիշ վոչինչ չի կարող անել, բացի չարանենդորեն տուն  
այրելուց»:

Այսպես ասած՝ Մասլովն այսակի ավել է Մոսկվայի հուզ-  
ված ու կատաղած չքավորի անելանելի կացության ճիշտ ձևա-  
կերպումը: Առանձին դեպքերում այսպիսի հրկիզումներ կարող  
էին լինել նաև 1748 թվի մայիսին: Հարկավոր և նկատել, վոր  
մի շարք կասկածելի անձնավորություններ բռնվել են բարոն  
Ստրուգանովի, կոմս Ռազումովսկու և ուրիշ հարուստ անատերերի  
ազարակների մոտ: Այս հանդամանքը, ճիշտ է, ամենից առաջ  
բացատրվում է նրանով, վոր այս ազարակներն առանձին աշա-  
ղջությամբ պաշտպանվում էին «հավատարիմ մարդկանցով»: Բայց  
հնարավոր են նաև իսկական փորձեր—հրկիզելու Մոսկվայի՝  
իրենց հարստությամբ ականավոր իշխանազուհների աները:  
Թերևս պատահական չե հետախուզական ատյանի դատախազ  
Նիկիտա Բեզորբազովի ասան մայիսի 29-ի հրդեհը (հրդեհը շու-  
տով մարվեց):

Մյուս կողմից՝ Մոսկվայի հրդեհները, վոր սնանկացնում  
էին անատերերին, ցանկալի յերևույթ էին նրանց համար, ով-  
քեր ուղում էին հարստանալ ուրիշի հաշվին: Ամեն մի հրդեհի  
հետ կապված ընդհանուր շփոթվածությունը հնարավորություն

էր տալիս հեշտությամբ հափշտակելու անկարգ կերպով փողոց  
շարված իրերը:

Պահակախմբերի ու հեծյալ պահակախմբերի բռնած մարդ-  
կանց մեջ քիչ չէին այն անձինք, ովքեր մեղադրվում էին  
հրդեհից տուժածների դուրս հանած իրերը հափշտակելու մեջ:  
Բռնում էին բազմազան առարկաներով՝ սպիտակեղենով, հա-  
զուստով, արծաթե իրերով մարդկանց:

Ուշակովյան հանձնաժողովին խիստ անհանգստացնում էին  
այսպես կոչված «ծածուկ գցված նամակները»: Մեր ունեցած  
նյութերից չի յերևում, թե արդյոք շատ էին այսպիսի նամակ-  
ներ գցվում և վնդն և նրանց լրիվ բովանդակությունը: Բայց  
վորոշ անդեկություններ նրանց մասին այնուամենայնիվ կան:  
Այսպես, մայիսի 27-ին գործարանատեր Միլյուտինը սենատոր  
Լեվաշևիին հասցնում է ծածուկ նետված մի նամակ, վոր վերցվել  
էր գործարանի մոտերքը՝ Մյանիցկայա փողոցում, Լորկովի ցան-  
կապատի մոտ: Նամակի ստորագրությունն էր Լավրենայեվ, իսկ  
նրանում ասված էր «յերրորդության որը պատարազի ժամանակ  
ամբողջ Մոսկվայի այրվելու մասին և վորպեսդի հեռանան, իսկ  
յիժե դուրս չդան, ապա կայրվեն բոլորը»: Ըստ յերևույթին ծա-  
ծուկ նետված նամակը նպատակ ուներ դրվել մոսկվացիներին  
իրենց ունեցվածքը դուրս բերելու անից: Նույնիսկ վորոշում էր  
ճշգրիտ ժամանակը, վոր դուզադիպում էր յերրորդության որը  
նոր հրդեհ լինելու վերաբերյալ ժողովրդական ասացվածքի հետ:  
Սա հրկիզումների կոչ չե, սա հրկիզումների սպառնալիք չե, այլ  
նախազգուշացում առաջիկա հրդեհներից, հաստատապես խոր-  
հուրդ տալով փրկվել և տներից դուրս գալ: Կարելի չե յենթա-  
դրել, վոր պրոֆեսիոնալ դողերը նույնիսկ համարձակություն  
էին ունենում հրկիզումներ անելու, վորպեսդի ստիպեն բնակիչ-  
ներին իրենց գույքը հանելու անից: Իսկ գողությունն այն ժա-  
մանակվա Մոսկվայում չափազանց զարգացած էր: Այս գողու-  
թյունը սնունդ էր առնում ինչպես սոցիալական հարաբերու-  
թյունների ընդհանուր բնույթից, այնպես էլ, մասնավորապես,  
վոստիկանական ու հետախուզական որդանների ֆենոմենալ վա-  
ճավածությունից: Բավական է նշել, վոր հենց 18-րդ դարի  
40-ական թվականներին և վերաբերում «հետախուզական ատյա-  
նի մասին»՝ պրովակատոր Իվան Կայինի քրեյական վիր-  
տուսի գործունեյությունը, վորի համար վոչինչ չարժեր կազմա-

կերպել հրկիզումը, հափշտակել տուժածների գույքը և ապա մատնել բոլոր նրանց, ովքեր այրում եյին հենց նրա դրդումով:

1748 թվի մայիսյան հրդեհները հիմնականում առաջացան վոչ դիտավորյալ հրկիզումից: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, անկարելի չէ, վոր լինեյին հրկիզումների առանձին դեպքեր՝ զրգված վրեժից, կամ բողոքից, կամ հրդեհից տուժածներին կողոպտելու նպատակով:

Պատմաբան Ս. Մ. Սոլովյովը կատարելով Յելիգավետայի թագավորութւյան առաջին յոթնամյակի՝ 1741-ից մինչև 1748 թվերի տեսութւյունը, գալիս եր այն յեզրակացութւյան, վոր «նկարագրված ժամանակն իր մասին հաճելի հիշողութւյուն թողեց ժողովրդի մեջ\*): Մոսկվայի բնակչութւյան մասսայի համար այս «հաճելի» հիշողութւյունը, ինչպես մենք տեսանք, կապված է սարսափելի հրդեհների և նրանց հաջորդած անկարգ, դաժան քննութւյան հետ, ծանրաբեռնութւյուն հանդիսացող պահակախմբերի և ոթեանելու, իշխանավորների իրարանցման հետ, վոր խիստ ծանրանում եյին բնակչութւյան «ստոր» խավերի վրա:

Գավառական քաղաքներում, վորոնք Մոսկվայի հետ միաժամանակ մեծ հրդեհներ են կրել, տեղի յին ունեցել հրկիզողների նման վորոնումներ, զուգակցված նույնպիսի ձերբակալութւյունների, տանջանքների ու անհեթեթ դատավճիռների հետ:

\*) Տես «Ռուսաստանի պատմութւյունը հնագույն ժամանակներից», 6-րդ գիրք, էջ 522:



82

HA  
3-1633a

ԳԻՆԸ 50 Կ.